բարձր խաւերի վրայ՝ միայն այս խաւերն են կարողացել անառակացնել, դուք վատասերում էք բանուորական զանգուածը, գիւղացիներին, մտաւորականներին եւ քաղքենի մանր բուրժուաներին՝ նրանց ձեր յետեւից քաշելով: Եւ ձեր գործը, որ սոցիալիզմի եւ ժողովրդավարութեան տեսակէտից ոճիր է, քաղաքական անառակութիւնը դէպի ժողովրդական խորքերն է տանում...

«Ամօթը պատում է մեզ: Ամօթ ոչ թէ ձեզ համար, ձեր սոցիալիստական կառավարութեան համար, այլ մեզ համար: Մենք ամօթ ենք զգում, որ ստիպուած ենք դրել այս ամէնը, որ ստիպուած ենք յիշեցնել այսքա՜ն տարրական ճշմարտութիւններ»...

Երկրորդ վկայութիւնը մեզ տալիս է յայտնի սոցիալ-դեմոկրատ Արշակ Զոհրաբեանը: Սա այն Արշակ Զոհրաբեանն է, որ միշտ բացասական, եթէ չասենք թշնամական, վերաբերմունք է ունեցել դէպի մեր ազգային ձգտումները: Համոզմունքով միջազգայնական՝ նա միշտ վրացական կամ ռուսական սոցիալ դեմոկրատիայի առաջին շարքերումն է կանգնել՝ մեր դէմ պայքար մղելու համար: Երկրորդ Պետական Դումայի ընտրութիւններին, վրաց սոցիալ դեմոկրատները նրա թեկնածութիւնն առաջ քշեցին՝ Դաշնակցական թեկնածուն տապալելու համար: Հայկական հալածանքների ժամանակ, երկիւղ կրելով թէ Արշակ Զոհրաբեանն էլ «իբրեւ հայ» կարող է հետապնդումների ենթարկուել՝ վրաց կառավարութիւնը չտապել էր նրան եւս ուղարկել մի ապահովագիր (sauf conduct), որի վրայ գրուած էր, որ նա հայ լինելու պատճառով չպէտք է ձերբակալուի կամ բանտարկուի:

Ահա այս Արշակ Զոհրաբեանը, Թիֆլիսի թերթերի միջոցով, հետեւեալ «Բաց նամակն» է ուղղում իր վաղեմի դաղափարակից ընկերոջը եւ անձնական բարեկամին՝ Նոյ Նիկոլայեւիչ Ժորդանիային:

«Նոյ Նիկոլայեւիչ,

«Կիրակի, Յունուար 5-ին, Թիֆլիսի փողոցները վկայ եղան այնպիսի խայտառակ վատերի, որ ես ինձ թոյլ եմ տալիս ուղղել ձեզ այս բաց նամակը: Տեղի ունեցած դէպքերին նայելով՝ կասկած չկայ, որ Վրաստանի ներսը պատերազմ է յայտարարուած ամբողջ հայ ազգաբնակութեանը:

Բոլոր թաղերում կատարուեցին խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ, որոնք ոչնչով չեն տարբերուում այն մեթոդներից, որ ցարիզմը կիրառում էր ձե՛ր դէմ, ի՛մ դէմ եւ հրէական ամբողջ ժողովրդի դէմ:

«Ձերբակալուած հայերը բանտարկուած են: Ոստիկանները, ատրճանակները ձեռներին, հարցնում էին անցորդներին բոլոր փողոցներում. «Դուք հա՞յ էք»: Եւ բոլոր դժբախտ զոհերը, որոնք չէին կարող ապացուցանել, թէ այլ ազգի են պատկանում, առաջնորդւում էին բանտ: Այս հայերից շատերին էլ... ձեռները չղթայակապ, տանում էին Հայոց Թեմական դպրոցը, որտեղ չղթաները հանելուց յետոյ, ստիպում էին, որ նրանք, ձեռները վեր ցցած, մնան անորոշ ժամանակով:

«Ձերբակալութիւնները, անարգանքները եւ հալածանքները իշխում էին ամբողջ քաղաքում հէնց այն միջոցին, երբ դուք, Նոյ Նիկոլայեւիչ, «Սպիտակ Սրահում» մասնակցում էիք ժողովրդապետական պարլամենտի նիստին:

«Ես ինձ թոյլ եմ տալիս առանձնապէս շեշտելու, որ այն պրովոկասիոններն ու տանջանքները, որոնց ենթարկուեցին հայերը Վրաստանի մայրաքաղաքում... աւելի՛ ինտենսիւ էին, քան ռուսական միապետութեան ամենաղժբախտ շրջանների հալածանքները:

«Առաւօտեան սկսուած այս վայրագութիւնները տեւեցին մինչեւ ժամը երկուսը եւ կէսը, այսինքն՝ մինչեւ այն ժամը, երբ «հանրային կարգի պաշտպանների աշխատանքի օրը» ըստ երեւոյթին վերջացած է նկատւում:

«Յունուար 5-ի խայտառակ դէպքերը ապացուցանում են նաեւ, որ Վրաստանի եւ մասնաւորապէս Թիֆլիսի հայերը օրէնքից դուրս են յայտարարուած: Եւ մի ամբողջ ժողովուրդ հալածանքի ենթարկողը սոցիալիստական կառավարութիւն է կոչւում! Կարո՞ղ էինք մենք երեւակայել, թէ մի օր հանդիսատես կը լինենք այս աղէտին: Մենք, (երկուսս) որ այնքան սերտօրէն գործակցել ենք մեր ընդհանուր խղճալը կերտելու համար՝ որպէսզի ազգային հակամարտութիւնները նուազագոյն